ԾԵՍԸ, ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ԳԵՂԱՄՅԱՆ Ա. Ա.

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերընդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Պատմության ընթացքում կազմավորվել են մի քանի այդպիսի միջոցներ կամ ձևեր: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բը-նույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործո-ղությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ[1]:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Տոնակատարության ողջ ընթացքում խարույկը վառվում է: Պարերը կատարվում են կրակի շուրջը: Մոխրի մեջ դրված են խնձորներ, որոնք պետք է խորովվեն մինչ լուսաբաց: Լուսաբացին արևի առաջին ճառագայթների հետ խարույկահանդեսը վերջանում է արշալույսը ողջունող երգ-խմբապարով, օրինակ, հետևյալ բովանդակությամբ.

Վարդ է բացվել առավոտյան խաղերով,
Իմ յարն այգում վարդ է քաղում մաղերով,
Վարդ է բացվել Վարդավառի կիրակին,
Քու սերն ընկել է իմ սրտի պուրակին...

Արշալույսին արդեն ակնհայտ է դառնում, թե խմբերից որին՝ աղջիկների՞ն, թե՞ տղաներին հաջողվեց հաղթել: Հաղթանակը որոշվում է սրամտությամբ,

---

[1] **Ионин Л. Г.** *Социология культуры, М., 2004, с. 166.*

երգերի իմացությամբ, նոր երգերի ստեղծմամբ: Պարտվող կողմը հաղթողին պիտի հյուրասիրի[2]:

Երգ-պարը դադարում է, խումբը հավաքվում է՝ խորոված խնձորը վայելելու: Գիշերային խարույկահանդեսի մասնակիցները մեկական խնձոր ուտելուց հետո մնացածը բաժանում են իրենց հարևաններին: Խորոված խնձորը բաժանելիս շնորհավորում են «Բարի առավոտը», «Բարի Վարդավառը» և խորոված խնձորի ճաշակմամբ՝ «նոր, բարի կյանքի հետ հաղորդակցումը»: Խնձոր բաժանողներն ընտանիքներին հրավիրում են տոնակատարությանը մասնակցելու այն կենտրոններում, որտեղ կազմակերպվում է հիմնական թատերական ժողովրդական տոնահանդեսը: Իսկ գյուղերում խնձոր բաժանողները մարդկանց հրավիրում են ուխտավայր՝ տոնի թատերականացված ընթացքին մասնակցելու և տոնը միասին նշելու համար:

Երեխա ունեցող ընտանիքները առավոտյան կարող են գնալ եկեղեցի: Տանում են հատկապես անչափահաս կամ փոքրահասակ երեխաներին՝ նախապես նրանց գլխին դնելով ծաղկեպսակ, իսկ ձեռքերին՝ խնձոր: Խնձոր բաժանելու ծեսը քաղաքներում ավարտվում է առավոտյան 8-9-ին, գյուղերում՝ ավելի շուտ[3]:

Վարդավառի մասնակիցների կողմից խնձորի խորովումը կատարվում է որոշակի ձևով միայն նրա համար, որ այն հենց այդպես խորովել են իրենց նախահայրերը՝ դրանով ընդգծելով հավատարմությունը նախնիներին և մեկը մյուսին: Ծեսից դուրս խնձորի խորովումը կատարվում է ավելի հարմար ձևով և ծառայում է այլ նպատակների (օրինակ՝ հազը մեղմելու, մրսածությունը բուժելու և այլն) և չունի խորհրդանշական բովանդակություն:

Վարդավառյան ավանդույթներից հատկապես տարածված էր խնձոր նվիրելու սովորույթը: Ինչպես որ խաղողը չէր կարելի ճաշակել մինչև Ս. Աստվածածնի կամ Խաղողօրհնեքի տոնը, այնպես էլ Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելված էր:

Պահպանվել էին ծիսական խնձորի հետ կապված բազում ծեսեր ու հավատալիքներ, և այս առումով տպավորիչ էին Տիգրիսի ակունքներում գտնվող «Արքայության աղբյուր» մատուռ ուխտավայրում կատարվող արարողությունները: Դրանց մասնակցում էին նաև դրացի ասորիներն ու քրդերը: Շատախի հայերը հավատում էին, որ Վարդավառի գիշերը «անմահության խնձորը», սրբազան այդ գետի ակունքներից դուրս գալով, անցնում է իրենց բնակավայրով: Նրանք ողջ գիշեր անքուն հսկում էին գետի ափը, որպեսզի տեսնեն այդ երանելի պահը, քանի որ հավատում էին, թե երջանիկ ականատեսի յուրաքանչյուր երազանք կիրականանա: «Արքայության աղբյուրի» ջուրը բուժիչ էր համարվում՝ կենդանիների մեջ տարածված հիվանդությունների համար: Այդ իսկ պատճառով հայերը, քրդերն ու

---

[2] **Խառատյան-Առաքելյան Հ.,** *Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:*

[3] *Նույն տեղում, էջ 322:*

ասորիները իրենց անասունները տանում էին աղբյուրի մոտ, մեկական ոչխար մատաղ անում, ինչպես նաև սրբազան ջրից ցանում հոտի վրա[4]:

Թարմ և չոր մրգերի և առանձնապես խնձորի առատ օգտագործումը ամուսնական ծեսի ընթացքում բացատրվում է այդ արգասաբեր հատկանիշները մոգական ճանապարհով նորապսակներին հաղորդելու ժողովրդական հավատալիքով: Այդ առումով ուշագրավ է նաև գրեթե բոլոր շրջաններում տարածված հարսանյաց կամ կենաց ծառ ստեղծելու և խնձորով զարդարելու սովորույթը:

Ագուլիսում և դրա շրջակայքում «թագաւորի ծառը զարդարելու ժամանակ… Առաջինը մոտենում է քաւորակինը և նվիրում մի խնձոր՝ վրան զարկած գոյնզգոյն թելերով զարդարուն փոքրիկ խաչ, որ կոչւում է ջղան»[5]: Քավորակնոջ նվիրած խնձորը երբեմն գնահատվում էր որպես մի ամբողջ կարողություն. «…քաւորկինը սանահոր համար մի խնձոր է բերել, ջղան վրէն, հայով, հոյով, նորա մարդը ինչ որ աշխատել է մալով, մարդով, տուէլ է էս մի խնձորին, որ կարձէ Խոյ, Խորասան, Հինդ, Հնդաստան…»[6]: Խնձորը օգտագործվել է նաև որպես հրավերք հարսանյաց հանդեսի ժամանակ. «Խնձոր առած ազափբաշին հրաւիրում է քաւորին և քաւորա-կնոջը…»[7]:

Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում տարածված հարսանյաց սովորույթների և ծիսական արարողությունների ժամանակ օգտագործվում են պտղաբերության խորհրդանիշ համարվող զանազան մրգեր, որում իր ուրույն տեղն ունի խնձորը: Հատուկ ուշադրության է արժանի հարսանիքի ժամանակ խնձորի՝ որպես սիրո և պտղաբերության աստվածությունների հիմնական խորհրդանիշի ծիսական կիրառումը[8]: Բաղեշում, աղջկան այցելած տղայի մայրը կամ բարեկամուհին, հավանելու դեպքում մի կարմիր խնձոր էր դնում նրա ափը, որը, նրան յուրային դարձնելուց բացի, նաև համարվում էր արգասավորության նշան[9]:

Հայաստանի որոշ շրջաններում, մասնավորապես Աղձնիքում, տարածված սովորույթ էր հարսնացուի վրա խնձորի նետումը փեսայի կողմից՝ նրան յուրային դարձնելու և արգասավորությամբ օժտելու համար: Հարսնառի վերադարձին այդ արարողությանը չմասնակցող փեսան իր տան կտուրից ձեռքի կարմիր խնձորը նետում էր բակում կանգնած հարսնացուի վրա, որը նույնպես աղջկան յուրային դարձնելու և նրան արգասավորությամբ օժտելու

---

[4] **Մկրտչյան Ս.**, *Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:*

[5] **Քաջբերունի**, *Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:*

[6] *Նույն տեղում, էջ 169:*

[7] *Նույն տեղում, էջ 158:*

[8] **Кагаров Е. Г.** *Культ фетишей и животных в Древней Греции, СПб., 1913, с. 163-164:*

[9] **Նահապետյան Ռ.**, *Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե., 2004, դ. 156:*

ծես էր Աղձնիքի Արզն (Խարզան) գավառում[10]: Ծեսը այսօր էլ պահպանվել է եզդիների միջավայրում:

Խնձորի կապը սիրո և պտղաբերության հետ ակնհայտ է աղջկա՝ մայրիշ-խանության շրջանից մեզ հասած հետևյալ երգի մեջ.

Խնձոր՝ ունիմ, առ, տղա,
Առ տե, ճեպտ դիր, տղա,
Քանի մեր դռնեն անցնիս,
Մի ամչնար, կեր, տղա:

Այստեղից էլ խնձորի ծիսական մոտիվի անցումը «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպին, որտեղ նույնպես այդ պտուղը Խանդութն է առաջարկում Դավթին, մի երևույթ, որը թերևս ձևավորվել է մայրական իրավունքի շրջանում:

Աղձնիքի հարևան Հասք գավառում, որտեղ զգալի թվով սասունցի գերդաստաններ էին հաստատվել, եկեղեցի պսակադրության գնալու ճանապարհին փեսան մինչև տեղ հասնել մի խնձոր էր պահում քթի տակ: Նման երևույթը ևս աղերս ուներ ամուսնական զույգի արգասավորության ապահովման և հավանորեն նաև չար աչքից պաշտպանելու գաղափարի հետ[11]:

Հետևաբար, ծեսը ներէթնիկական կապերի կարգավորման դեր ունի՝ օգնում է էթնոսի անդամներին յուրացնել խմբային նորմերն ու արժեքները, համախմբվել, ինչպես նաև հանել առօրյա կյանքի նյարդային և հոգեբանական լարվածությունը: Հետագայում պետություններն օգտագործում են ծեսի խորհրդանշական ուժն իրենց խնդիրների լուծման համար: Ժամանակի ընթացքում այն տարածվում է պետական արարողությունների և կենցաղային ձևերի վրա:

Աստիճանաբար ծեսը որոշ ավանդական կանոններին հետևելու բնույթ է ստանում: Ամեն դեպքում ծեսը նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, էթնոսին, պետությանը: Օրինակ՝ իսլամական քաղաքակրթության միասնությունը մեծ չափով պահպանվում է մուսուլմանական հավատքի խիստ և ծիսականորեն սրբացված կանոններով:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է (ритуал): Այն ներառում է ավանդական

---

[10] Նույն տեղում, էջ 156:
[11] Նույն տեղում, էջ 157:

գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ իրավիճակներում (ծնունդ, պսակադրություն, մահ, իշխանության փոփոխություն և այլն):

Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»[12]: Հայկական իրականության մեջ կատարվող բազմաթիվ ծիսակարգերից հիշատակության է արժանի մանկան մկրտության արարողությունը:

Հայկական եկեղեցու կարգի համաձայն՝ ծննդկանը, նորածինը և տատմերը մաքրված ու հալալված էին համարվում երեխայի մկրտությունից հետո միայն: Այս կարգն այն աստիճան էր արմատավորված ժողովրդի մեջ, որ չմկրտված նորածին երեխայի մահանալու դեպքում նրան թաղում էին ոչ թե համայնքի կամ տոհմական գերեզմանոցում, այլ դրանից յոթ քայլ հեռու: Այդ ննջեցյալների համար նույնիսկ թաղման արարողություն կամ որևէ աղոթք չէր արվում, այլ անձայն, երբեմն էլ գաղտնի էին թաղում: Մկրտության ծեսով, փաստորեն, հասարակությունը նորածին անհատին իրավական ուժ էր տալիս, իր մեջ էր առնում աշխարհ եկած նոր անդամին:

Երեխայի կնունքը տեղի էր ունենում ծննդյան յոթերորդ օրը լրանալուց հետո՝ ութերորդ օրը, եկեղեցում կամ տանը, տոհմական քավորի, մայրապետի, ազգականների ու այլ հանդիսականների ներկայությամբ: Երեխային եկեղեցի մկրտության տանելիս տանողների հետևից մոր բարձի տակ պահած չարխափան գլուխ սոխեր էին շպրտում, ասելով. «Առ ծանրությունդ, տուր թեթևությունդ»: Ճանապարհին նորամանուկին չարքերից ազատ պահելու միտումով նաև հաց էին վերցնում, որը եկեղեցում բաժանում էին աղքատներին՝ երեխայի ապագա բախտավորության ակնկալիքով: Այդ միջոցին երկաթե շամփուրից անբաժան ծննդկանը նորածնի աղջիկ լինելու դեպքում տանը գուլպա էր հյուսում, իսկ տղա լինելու դեպքում գիրք էր կարդում կամ թերթում՝ նրանց ապագայում այդ շնորհքները հաղորդելու հավատքով[13]:

Եկեղեցում մանկանը կնքում էին բեմի ձախ կողմում գտնվող հատուկ ավազանում, իսկ տանը՝ թոնրի կամ թվեքի շուրջը, մեռոնաջրով լցված անգանակում՝ (հացի փայտե տաշտ): Տանը հիմնականում մահամերձ նորածնի կնունքն էին անում[14]: Կնունքի արարողության ավարտին նորածնի մայրը ծնկաչոք մոտենում էր քավորին, խոնարհվում նրա ոտքերի առջև, համբուրում դրանք ու բալուլը վեցնում: Պսակի քավորն էր ընտրվում

---

[12] **Սարգսյան Ա.,** *Մշակույթի տեսություն, Ե., 2003, էջ 78:*

[13] **Նահապետյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 176:*

[14] *Նույն տեղում, էջ 176-177:*

կնքաքավոր: Երբեմն, քավորի բացակայության դեպքում, երեխային կնքում էին ալյուրի մաղի վրա, որը փոխարինում էր քավորին, «քավորություն էր անում»[15]: Հայոց կենցաղում հարստության, լիության, ունևորության հիմնական չափանիշը հացահատիկն ու դրանից ստացվող սննդամթերքներն էին համարվում: Բնականաբար, անընդհատ գործող ալյուրի մաղը ևս դիտվում էր որպես առատության և սրբության խորհրդանշան: Ուստի պատահական չէր քավորին ալյուրի մաղով փոխարինելու սովորույթը: Մանկանը քավորի թևերի փոխարեն դնում էին ալյուրի մաղի վրա:

Նախիջևանում (երկար ժամանակ նաև Խորհրդային Հայաստանում և ՀՀ-ում) երեխայի մկրտությունը կամ կնունքը կոնկրետ ժամանակ չուներ: Այն կատարվում էր ըստ հանգամանքների: Նրանք յուրաքանչյուր ընտանեկան ուրախ առիթով իբրև շնորհավորանք գործածել են տարբեր դարձվածքներ: Զավակաբերությունը Նախիջևանում կոչվել է «տղաբերք», և շնորհավորելու համար գործածել են «աչք լուս լինել» դարձվածքը, որը, նրանց կարծիքով, եղել է «Աստուծոյ շնորհքը, ուրեմն և աչքի լոյսի պէս սիրելու ու փայփայելու բան է եղել նոցա համար զաւակը, իբրև նախախնամութեան տուած պարգևը, իբրև ժառանգ, սերունդը շարունակող, իբրև տան, ծնողներին աջակից և, վերջապէս, իբրև օգնական, աշխատող ոյժ»[16]: Ե. Շահազիզի վկայությամբ՝ «Երեխայի մկրտութիւնը կամ կնունքն այս կողմերում որոշեալ ժամանակ չունի. նա կատարուում է կամ 2-3 օրից յետոյ, կամ աւելի ուշ, նայելով հանգամանքին: Գիւղերում կնունքի կարգը միայն բացառիկ դէպքերում է տանը կատարուում, իսկ քաղաքում այդ դատապարտելի սովորութիւնն աւելի յաճախ է տեղի ունենում և շարժական աւազան գործածելու սովորութիւնը գնալով տարածուում ու ընդհանրանում է»[17]:

Նախիջևանում նորածին մանկան կնունքը տուն բերելու կարգ էր, որը կատարվել է հետևյալ կերպ. «Կնունքը տուն է բերուում լուռ ու մունջ. սկսում են միայն երգել, երբ հասնում են ծննդկանի տանը: Հին ժամանակների եկեղեցուց մինչև տուն շարական ասելը և զանգակներ հնչեցնելով կնունքը տուն բերելը ներկայումս քաղաքում իսպառ վերացել է և մնացել է միայն գիւղերում, այլև էլ ոչ ամեն տեղ: Մինչև ցայսօր դեռ կարելի է տեսնել կնունքի այդ զանգակները մեր եկեղեցու միւս նուագարանի-ծնծղաների հետ Նախիջևանի եկեղեցիներից մի քանիսի պահարաններում պահուած եկեղեցական ուրիշ անգործածելի իրեղէնների հետ:

Մկրտութեան խնջոյքի սեղանի վերայ անպատճառ դրուում է աւանդական ձուածեղը, որ ուտելուց յետոյ, հրաւիրեալներից իւրաքանչիւրին համար անհրաժեշտ պարտականութիւն է համարում փող ձգելու ձուածեղի սկուտեղի մօտ յատկապէս այդ նպատակի համար դրուած պնակի մեջ, որից

---

[15] *Նույն տեղում, էջ 177:*

[16] **Շահազիզ Ե.,** *Ծէսեր և սովորութիւններ (ԱՀ, գ. 7-8, Թ., 1901, էջ 96):*

[17] *Նույն տեղում, էջ 98:*

հին ժամանակները հատուցուել է դայեկի կամ մանկաբարձի աշխատութեան վարձը»[18]:

Օրինակներն ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ «ծիսակարգը սոցիալական գործունեության խորհրդանշանային այն ձևն է, որտեղ անմիջական առարկայական արդյունք չի ստեղծվում»[19]: Ծիսակարգը, պաշտամունքից անցնելով կենցաղ, կորցրել է մոգական կամ պետականորեն ամրագրված իմաստը:

Մշակույթի ժառանգականության փոխանցման երրորդ ավան-դական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ:

Ըստ Ա. Սարգսյանի՝ «Սովորույթը կայուն, ստերեոտիպային վարքագծի զանգվածային ձևն է, որը ձևավորվում է պատմականորեն: Սովորույթը պահանջում է վարքագծի տառացի կատարում և մեկնաբանման կարիք չի զգում: Սովորույթը գիտակցության, ինքնագիտակցության հետ կապ չունի, այն ցուցադրական վարքագիծ է, պահպանվում և կատարվում է, որովհետև բոլորն են կա-տարում, այդպես է ընդունված, այդպես է փոխանցվել նախորդ սերունդներից»[20]: Թեև որպես մարդկային փոխներգործության հիմնական կարգավորիչ՝ սովորույթը հանդես է գալիս մարդու պատմության վաղ ժամանակաշրջանում և այսպես կոչում «ավանդական հասարակություններում», համենայն դեպս այն շարունակում է ապրել ու գործել և զարգացած էթնիկական համակարգերում՝ անձնավորվելով քիչ թե շատ պարտադիր վարքի մեջ: Այն մարդը, որը սովորույթներ չի կատարում, այսպես թե այնպես դուրս է մղվում հասարակությունից: Սովորույթը կապված է նաև իրավունքի հետ:

Վ. Գրաֆսկու պնդմամբ՝ «իրավունքի պատմությունից հայտնի է, որ իրավունքի ամենասկզբնական և ամենահին աղբյուրը եղել է սովորույթը, իսկ սրա գործող հետևանքը՝ սովորութային իրավունքը»[21]: Որքան հին է սովորույթը, նույնքան մեծ է նրա հեղինակությունը հասարակական հարաբերությունները կարգավորելիս: Հեղինակությունը ենթադրում է նաև պահպանողականություն, կայունություն: V դարի ականավոր հայ մտածող, պատմիչ Եղիշեն իր «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկում սովորույթի ուժի մասին գրում է. «Նախնիներից սովորույթ ունենք՝

---

[18] *Նույն տեղում, էջ 99:*

[19] **Սարգսյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 78:*

[20] *Նույն տեղում, էջ 78:*

[21] **Графский В. Г.** *Всеобщая история права и государства, М., 2000, с. 36-41.*

աստվածաբար պատվիրանի համաձայն՝ աղոթք անել թագավորի կյանքի համար և անդադար խնդրել Աստծուց նրա համար երկար կյանք, որպեսզի խաղաղությամբ վարի այն տիեզերական իշխանությունը, որ աստված է հանձնել նրան»[22]*:*

Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Ըստ մշակութաբան Յու. Չերնյավսկայայի՝ իսպանացի փիլիսոփա և մշակութաբան Խ. Օրտեգաի-Գասետը սովորույթները բաժանում է 2 տիպի՝ թույլ և մեղմ, ինչպես նաև ուժեղ ու կոշտ: Առաջինը նրանք են, որոնք կոչվում էին «սովորույթներ և բարոյագիտություն», այսինքն՝ վարքի, սննդակարգի, փոխհարաբերությունների սովորական նորմեր: Դրանք հասարակությունում արմատավորվում են երկար ժամանակի ընթացքում և այդպես էլ երկար և աստիճանաբար դուրս են գալիս: Ուժեղ և կոշտ սովորույթները, որպես կանոն, հիմնում են քաղաքագետները և պետական գործիչները. օրինակ՝ բռունցքի մեջ սեղմած ձեռքով ողջունելը կամ սուր դանակի պես առաջ ցցված ափով: Դրանք ձևավորվում են որոշակի գաղափարաքաղաքական նպատակներով, առաջանում են կայծակնապես և այդպես արագ անհետանում. դրանք ըստ էության ոչ այնքան սովորույթ են, որքան քաղաքական կամ գաղափարական բանաձև: Սովորույթը շատ ավելի կապված է առօրյա կյանքի հետ, քան արարողությունն ու ծեսը: Ինչպես ծեսն ու ծիսակատարությունը, կորցնելով իրենց իմաստը, կարող են դառնալ սովորույթ, այնպես էլ սովորույթը կարող է վերափոխվել ծիսակատարության ու ծեսի: Այդպես մուսուլմանները հրաժարվեցին խոզի միս ուտելուց զուտ հիգիենիկ անհրաժեշտությունից՝ շոգ կլիմայում խոզերի օրգանիզմում բազմանում են մարդու համար մահացու բակտերիաներ: Սակայն հետո դա դարձավ պարտադիր ծես[23]*:*

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ, ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են:

---

[22] **Եղիշե,** *Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1994, էջ 12:*

[23] **Чернявская Ю. В.** Народная культура и национальные традиции (Учебно-методическое пособие, Минск, 1998, с. 119).

ОБРЯД, РИТУАЛ И ОБЫЧАЙ КАК МЕХАНИЗМЫ НАСЛЕДОВАНИЯ И ПЕРЕДАЧИ КУЛЬТУРЫ

ГЕГАМЯН А. А.

Резюме

Одна из закономерностей развития культуры заключается в единстве непрерывности и прерывности.

В сфере культуры непрерывность осуществляется путем наследования или передачи социального опыта. В механизме наследования важную роль играют сформированные в прошлом и передаваемые из поколения в поколение традиции, которые имеют практические стороны, включающие обряд, ритуал и обычай.

Обряд включает в себя такие формы поведения, которые по сути являются знаковыми и не имеют практического характера. Ритуал содержит традиционные действия, сопровождающие человека и общество в целом в важные моменты их деятельности. А обычай являет собой средство стереотипного поведения, которое воспроизводится в опреде-ленном обществе либо социальной группой.

В свете сказанного обряд, ритуал и обычаи представляют традиционный армянский народный быт, к примеру, сохранившийся на протяжении веков обряд, связанный с крещением.

RITE, RITUAL AND CUSTOM AS INHERITANCE AND CULTURE TRANSFER MECHANISM

A. GEGHAMYAN

Abstract

Cultural development implies unity of continuation and interruption. In culture, continuation is implemented through inheritance or social experience. The present paper addresses the practical features which include “rite”, “ritual”, and “custom”.

The ceremony is defined as a kind of behaviour, which is symbolic in its nature and does not pursue any practical goals. Rites comprise traditional activities, accompanying people during the most important events in their life, whereas customs make a stereotypical behaviour, reproduced in a certain society by a social group.

Hence, rites and customs make an inextricable part of traditional Armenian activities and events.